

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի  
հոգաբարձուների խորհրդի՝ 2019թ. դեկտեմբերի 30-ին տեղի ունեցած թիվ 10 նիստի**

ք. Վանաձոր

Նիստը նախագահում էր հոգաբարձուների խորհրդի նախագահ, Դիանա Տեր-Ստեփանյանը, քարտուղարում՝ Խորհրդի քարտուղար ՎՊՀ պատմության ամբիոնի դոցենտ Ս. Աղաջանյանը:

Հիմք ընդունելով «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՎՊՀ) հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 21-րդ կետը (Խորհրդի նիստերը կարող են անցկացվել տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման կարգով)

Օրակարգում դրված էր երեք հարց.

**Օրակարգում՝**

1. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի **ռեկտորի թափուր պաշտոնի համար բաց մրցույթ հայտարարելու որոշում,**
2. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի **ռեկտորի թափուր պաշտոնի համար բաց մրցույթի մասնակիցների փաստաթղթերն ընդունող հանձնախումբ ստեղծելու մասին:**

Օրակարգի հարցերը էլեկտրոնային փոստով ուղարկվել է Խորհրդի բոլոր 22 անդամներին (քվեաթերթիկների նմուշը կցվում է):

Անցկացման ամսաթիվ՝ «25» դեկտեմբերի 2019թ.	Վերադարձման վերջնաժամկետը՝ «30» դեկտեմբերի 2019թ. ժամը՝ 16 <sup>00</sup>
<p style="text-align: center;">ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԴՐՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</p> <ol style="list-style-type: none"> <li>ՎՊՀ-ի ռեկտորի թափուր տեղի մրցույթն անցկացնել 2020 թվականի մարտի 1-ին՝ ժամը 11.00-ին, ՎՊՀ վարչական շենքի դահլիճում:</li> <li>ՎՊՀ-ի ռեկտորի թափուր տեղի հավակնորդների փաստաթղթերն ընդունող հանձնախմբում ընդգրկել Էդգար Խաչատրյանին և Սոնա Սարգսյանին</li> </ol>	

Քվեարկության տարբերակներ

1. Հեռակա քվեարկության դրված առաջին հարցով

Կողմ

Ձեռնպահ

Դեմ

2. Հեռակա քվեարկության դրված երկրորդ հարցով

Կողմ

Ձեռնպահ

Դեմ

**ՆՇՈՒՄՆԵՐ**

---



---



---



---



---



---

**Ծանոթություն.** Ձեր նախընտրած տարբերակի դիմաց անհրաժեշտ է դնել V նշանը:

Քվեարկության արդյունքներն ամփոփելիս տվյալ հարցով քվեարկությունը համարվում է վավեր և հաշվի է առնվում ձայները հաշվարկելիս, եթե համապատասխան նշանը դրվել է քվեարկության միայն մեկ տարբերակի դիմաց, և քվեաթերթիկը ստորագրված վիճակում Խորհրդին է վերադարձվել նշված ժամկետում:

Խնդրում ենք քվեաթերթիկը Սկան (Scan) տարբերակով նշված ժամկետում ուղարկել [s.aghajanyan.71@yandex.ru](mailto:s.aghajanyan.71@yandex.ru) հասցեին:

Օրակարգի առաջին և երկրորդ հարցերի քվեարկությանը մասնակցել են հոգաբարձուների խորհրդի 16 անդամներ.

Առաջին հարց. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի թափուր պաշտոնի համար բաց մրցույթ հայտարարելու որոշում.

Կողմ՝ 16, Դեմ՝ 0, Ձեռնպահ՝ 0:

Երկրորդ հարց. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի թափուր պաշտոնի համար բաց մրցույթի մասնակիցների փաստաթղթերն ընդունող հանձնախումբ ստեղծելու մասին:

Կողմ՝ 15, Դեմ՝ 1, Ձեռնպահ՝ 0:

### **Որոշվեց.**

1. Ղեկավարվելով «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 2-րդ ենթակետով և ՎՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետով 2020 թվականի մարտի 1-ին անցկացնել ՎՊՀ-ի ռեկտորի թափուր տեղի համար մրցույթ:
2. Ղեկավարվելով «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Ռեկտորի ընտրության կարգի» 13-րդ կետով, (Հայտերը ընդունում է ՎՊՀ հոգաբարձուների հանձնախումբը, որը բաղկացած է առնվազն երեք հոգուց, այդ թվում ՀԽ քարտուղարը: Հանձնախմբում ՀԽ դասախոսական և ուսանողական կազմից ընդգրկվում է մեկական անդամ և ևս մեկ անդամ ոչ դասախոսական ոչ ուսանողական կազմից) ռեկտորի թափուր տեղի համար մրցույթի մասնակիցների հայտերն ընդունող հանձնախմբում ընդգրկել Էդգար Խաչատրյանին և Սոնա Սարգսյանին:

ՆԻՍԻՆ ՆԱԽԱԳԱՀ՝

Դ. ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՆԻՍԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ս. ԱՂԱԶԱՆՅԱՆ